65. ԿԱԽԱՐԹԸ

Մին հիվանդ մարթ, մին խուրջին օսուքը քըցած կյամ ա մին ախպուրի քըշտե կաղնում։ Էտ թամուղ-թաքյուզ ախպուրը, էտ զիլզիլան ճուրը վեր տեսնում ա, կուժավ ճուր տանող կնանոցն ասում ա. — Ա կնանեքյ, մին պատառ ճուր տվաք, խմիմ։

Կնանեքյն ասում ըն. — Քյուլվիս տո՞ւ, քյինա կորե։

Մին օրիշ կընեգյ ասում ա. — Ախճի, խե՞ ճուր չըք տամ։

Պիրում ա, կուժեն դըրետավը ճուր տամ էտ մարթեն, համ էլ ասում. — Ապեր, մեր տոնը հեն ա երի ընգյունեն, կըկյաս մեր տոնը։

Էտ մարթը ասում ա.— Խե՞ չըմ կյա՞լ, կըկյամ։

Վեր մթնում ա, քյինամ ա ընդահանց տոնը։ Մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, էս հի՞նչ մարթ ա։

Կնեգյն ասում ա.— Մարթ ա իլի՞, ղոնաղ ա՞։

Մարթն ասում ա. — Դե հաց շինի, օտենքյ։

Ղոնաղն ասում ա.— Յըրես մինակ խուխե մես ըմ օտում։

Ըտահանց էլ մինակ մին տղա խոխա յա ինում, պուրում ըն խոխան մորթում, ուփում, տունում ղունաղեն ըռաշկեն։

Քշրհանը լսում ըն մին խուխե սաս։

Կնեգյն ասում ա. — Ա մարթ, էն հի՞նչ սաս ա։

Մարթն ասում ա.—Դե հի՞նչ գյիդամ, մին խոխա ունինքյ, էն էլ մուրթեցենքյ։

Ը՞ր ըն կենում տեսնում ուրանց խոխան ուրուրուցումը։ Էտ ղոնաղըն էլ կա վեչ։

Նոր գյուղում ըն, վեր էտ կախարթ ա իլալ։ Խուխին վըսկռնեբան նոր խոխա յա շինա՞լ, ինքը քյացալ։

Կախարթը ըտաղատ քյինամ ա, տեսնում մին մարթ ցաքյ ա պուրում։

Ասում ա. — Ա՛ մարթ, խե՞ կարում չըս ապրես։

Էտ մարթն ասում ա. — Դե հի՞նչ անիմ, քյասիբ ըմ։

Էտ մարթը էտ ցաքյին տեղը հաղուղի բաղ ա շինում, համ էլ ասում.— Դե, ըիջարի, կեր։

Մին էլ քյինում ա, տեսնում մին մարթ փաղը մեշկին քյինամ ա, ծմակին մեշավը, համ էլ ասում ա. — Ուխա՞յ, հի՞նչ լավ խընձորի ծառեր ըն է՞։

Էտ մարթը ծմակը խընձորի ծառեր ա շինում, համ էլ ասում. — Դե, քյինա՞ բիջարի, ապրես։

Ըտըղատ էլ քյինամ ա, տեսնում մին մարթ քարը շլակին քյինում ա, համ էլ ասում. — Խուվա՞, հի՞նչ լավ վեխճըրնի յըն է՞։

Էտ մարթը սաղ քարերը վեխճըրնի յա շինում, ասում. — Դե տու էլ ըտրանավ ապրես։

Ուտունց անա վեչ մինը գյուղում չի, վեր էտ մարթը կախարթ ա։ Էտ մարթը քյինամ ա մին տարի կենում, ետնան ասում. «Քյինամ, տեսնամ ըտահանք հի՞նչ պանի յըն»։

Կյամ ա տեսնում ըտահանցա էն վըշխըրատարը մին վեչխար մորթած քյեփ ա անում։ Էտ մարթն ասում ա. — Մին պատառ ինձ տվաք։

Ասում ըն. — Խե՞, մըզնհետ վեչխար ըս ըշխադա՞լ։

— Լավ ա, լըհա՞ մին թիքյա՞ տվաք։

Էլհա տամ չըն։ Էտ մարթը ծեռքերը տուրուր ա տամ, լոխ վեչխարնին քարեր ըն տանում։ Ըտաղատ կյամ ա խնձորեն բաղը։ Տեսնում ա խնձորը քաղում ըն։

Ասում ա. — Մին խնձոր տվաք։

Ասում ըն. — Կլխներաս ըռադ իլ, կորե։

Էտ մարթը ծեռքերը տուրուր ա տամ, բաղը տանում ա էլհա էն համանն ծմակը։

Ըտաղատ կյամ ա հաղուղին բաղը։

Ասում ա. — Մին ճիթ հաղուղ տվաք։

Նոքյարն ասում ա. — Թող քյինամ ըղեն անա հրցնիմ։

Քյինամ ա, կյամ, ասում.— Տամ չի, ասալ ա, քյինա՞ սրտեն թխե, ասե՝ քյինա՞, կորե։

Էտ մարթը ծեռքերը տուրուր ա տամ, էտ բաղն էլ ա տաՌնում ծմակ։

Մին էլ քյինամ ա, էն խոխան վեր կերալ ա, ընահանց տոնը։ Ասում ա, վեր ինքը ընահանց խոխան օտողն ա։

Ասում ըն. — Բա հո՞մց անինքյ, մեր կլխեն մեր աշկեն յրան ըս եկալ, պարով ըս եկալ, պեր վրեննիտ տակը կանանչ-կյարմուր թիլ քըցինք։

Էտ մարթն ասըմ ա. — Վեր ըտհենց ա, ամման քըշեր 400 մանեթ ա կյալու ծեր տոնը, ծեր պերցին տակը. լավ տոն շինեցաք, լավ ապրեցաք։